105 Թե չստանան այստեղ լուծում

1. Թե չստանան այստեղ լուծում
Քո շատ հեղված արտասուքներ,
Պայծառ, լուսո այն աշխարհում
Դու կտեսնես, թե միտքն ինչ էր:

2. Հուսա՛ Աստծուն և համբերի՛ր,
Թե շատ լինեն փորձություններ,
Մի՛ վհատիր, հաղթող եղի՛ր,
Այնտեղ կտեսնես՝ միտքն ինչն էր:

3. Եթե երբեք քո կյանքի մեջ
Պայծառ արևը չծագի,
Եվ դու ապրես սև ամպի մեջ,
Այնտեղ կտեսնես՝ միտքն ինչ էր:

4. Եթե ամեն քո փափագներ
Հերթով, մեկ առ մեկ մերժվեն,
Ի չիք դառնան ամեն հույսեր,
Այնտեղ կտեսնես՝ միտքն ինչ էր:

5. Քո Բարեկամն հավատարիմ
Քեզ մոտ է միշտ, ամեն օրեր,
Կառաջնորդե, գիտե ուղին,
Այնտեղ կտեսնես՝ միտքն ինչ է: